«Հիշողության լանդշաֆտը»

որպես պատմության դասավանդման հասկացություն և գործիք

Սույն հոդվածը գրվել է «Պատմության մրցույթներ Հայաստանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում 3.0» ծրագրի շրջանակում: Այն հանդիսանում է ուսումնական նյութ/ուղեցույց ուսուցիչների համար՝ պատմություն առարկայից աշակերտների ներգրավմամբ բանավոր պատմության մեթոդաբանությամբ նախագծային աշխատանքներ իրականացնելու համար:

Ծրագիրն իրականացվում է Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության միջազգային համագործակցության ինստիտուտի (Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ) կողմից Քյորբեր հիմնադրամի և «Հազարաշեն ազգաբանական հետազոտությունների հայկական կենտրոն» ՀԿ հետ համագործակցությամբ՝ Գերմանիայի արտաքին գործերի նախարարության ֆինանսական աջակցությամբ:

Supported by Federal Foreign Office

«Հիշողության լանդշաֆտը»

որպես պատմության դասավանդման հասկացություն և գործիք

Հեղինակ՝ Գայանե Շագոյան

«Հիշողության լանդշաֆտ» հասկացությունն այլաբանություն է, որի միջոցով փորձում են արտահայտել վայրի, տարածքի և հիշողության միջև փոխկապվածությունը՝ ներառելով ոչ միայն անձնային հիշողությունները, այլև առասպելաբանական պատումներ, նյութական միջավայրից եկող զգայական ազդեցությունը և նյութական միջավայրն ինքնին:[1] Այս հասկացությունը նաև մաս է կազմում մեկ այլ, ավելի լայն ոլորտի, որը կոչվում է «հանրային պատմություն», որը միաժամանակ փորձ է անում պատմությունը հնարավորինս մոտեցնել ցանկացածիս, հանրությանը, մյուս կողմից, ցույց տալ այն հեռավորությունը, որը տարանջատում է անցյալը ներկայից: Այս գաղափարը ցույց տալու համար հարմար է օգտագործել «հիշողություն» և «լանդշաֆտ» բառերը, քանի որ «հիշողության» մեջ կա շատ անձնական ընկալում, մարդու համար անցյալի կարևորության գիտակցում («եթե հիշում եմ՝ ուրեմն կարևորում եմ»), և եղածի անցողիկ լինելու ընկալում՝ հիշում եմ, քանի որ այլևս չկա, տեսնում եմ խզումը ներկայի հետ: «Լանդշաֆտ» բառը հաղորդում է տարբեր հիշողությունների համաժամանակյա ներկայությունը: Դրանք տեսանելի են միևնույն տարածքում՝ զբաղեցնելով տարբեր շերտեր՝ մեկը մյուսի վրա նստած, կամ նույն կետում իրար խառնված: Ուստի, որպեսզի հասկանանք, թե ինչպես է հիշողության և տարածքի (լանդշաֆտի) ուսումնասիրության միջոցով բացահայտվում հանրային պատմությունը, մի փոքր կանգ առնենք «հանրային պատմության» առկա մոտեցումների վրա:

Այսօր հանրային պատմությունը ձևավորվել է որպես առանձին գիտակարգ, որը ԱՄՆ-ում ներառվել է կրթական համակարգում դեռևս 1970-ականներին[2]: Այժմ «հանրային պատմություն» առարկան դասավանդվում է այդ երկրի շուրջ 200 կրթական օջախներում:[3] Սա, իհարկե, չի նշանակում, որ մինչև չհայտնվեց «հանրային պատմություն» հասկացությունը կամ առավել ևս գիտակարգը, մեր հանրային

---

[1] The Routledge Handbook of Memory and Place, ed. By S. De Nardi, H. Orange, S. High, E. Koskinen-Koivisto, NY: Routledge, 2020.

[2] Liddington J. What is Public History? Publics and Their Pasts, Meanings and Practices // Oral History, 2002, N1 (30), pp. 83-93.

[3] Cauvin T. Public history in the United States: Institutionalizing Old Practices // What Is Public History Globally? Working with the Past in the Present / Ed. by P. Ashton, A. Trapeznik. London; New York: Bloomsbury Academic, 2019, p. 154 (pp. 145-156).

տարածքները զուրկ էին անցյալին հղում անող նյութական տարրերից կամ գործողություններից (օրինակ՝ հիշատակի, ոգեկոչման ծեսերից)։ Պատմությունը միշտ ունեցել է հանդիսատես, և պատմաբանները, իրենց աշխատանքները գրելուց, որպես հասցեատեր ավելի հաճախ տեսել են պարզ մարդուն, քաղաքացուն, քան մասնագետ-պատմաբանին։ Պատմության մասնագիտական շրջանակները ձևավորվել են ընդամենը 19 դ. վերջին և կայացել միայն 20-րդ դարում։ Մինչ այդ նույնիսկ լավագույն պատմաբանների աշխատանքները միտված էին «հանրային լսարանին», հեռավոր ապագայից իրենց դատող սերնդին։ Այս տրամադրությունների շրջանակում են նաև գործում թանգարանները, դասագրքերը, հուշարձանները, պատմությանն առչնվող շատ գեղարվեստական գրքեր, ֆիլմեր, հաղորդումներ նն։ Այսինքն, պատմությունն իսկապես մեզ շրջապատում է ամենուր՝ թե հանրային տարածքում, թե նույնիսկ մեր տանը՝ ընտանեկան լուսանկարներում, փաստաթղթերի ընտանեկան արխիվում, հնուց մնացած և երբեմն իրենց իմաստն ու գործառնությունը կորցրած իրերում, առօրյա սովորություններում, որոշ ծեսերում, բառերում, արտահայտություններում, նույնիսկ ճաշացանկերում[4]։ Մի խոսքով՝ ամեն ինչ, որն ունի անցյալ։ Սակայն ամեն տեղ չէ, որ մենք լսում ենք այդ անցյալից եկող ձայները։ Հանրային պատմությունը հնարավորություն է տալիս տարանջատել խմբային և անհատ ձայները, շերտերը, ուղերձները։ Երբ «մեծ պատմությունը», որն անհերքելի, միանշանակ փաստերով և մեկ ձայնով է խոսում դասագրքի էջերից, տեղափոխում ենք մեզ շրջապատող հիշողությամբ պարուրված տարածք, այն դառնում է ոչ միայն բազմաձայն, այլև շատ ավելի հասկանալի, մարդկային, այսօրվա կյանքին առնչվող կարևոր և, երբեմն, իրարամերժ փաստերով լեցուն։ «Հիշողության լանդշաֆտի» հանդեպ ուշադրությունը մեզ կհարստացնի տարածքի բազմակի ընթերցմամբ կարողությամբ։ Միևնույն տարածքը, հուշարձանը, շենքը կկարողանանք տեսնել, գնահատել շատ տարբեր դիտանկյուններից, մեզ կզգանք ժամանակի մեքենայի մեջ և շերտ-շերտ վեր կհանենք կամ կավելացնենք պատմական իրադարձությունների մասին գիտելիքներս։

Հանրային պատմության մասնագետներին կարելի է բաժանել երկու խմբի՝ մեկը, որ ուսումնասիրում է, թե ինչպես է պատմությունը ներկայացված հանրային տարածքում, մյուսը մշակում է գործիքակազմ՝ ծրագրեր, միջոցառումներ, գործողություններ, թե ինչպես պատմությունը ներկայացնել հանրային տարածքում։ Այսինքն, մի թևը ավելի տեսական, հետազոտական հարցերի վրա է կենտրոնացած, մյուսը՝ հիմնականում պրակտիկ, կոնկրետ միջոցառումների։

[4] Ճաշատեսակների միջոցով պատմություն պատմելու լավագույն օրինակներից տե՛ս՝ Թ. Թովմասյան, Մեր շէն սեղանէն. մամիկներուս խոհանոցէն համեր եւ յուշեր, Արաս, Ստամպուլ, 2018։

Այս ծրագրի շրջանակում մասամբ երկու մոտեցումները որոշ չափով կարող են համատեղվել։ Օրինակ, աշակերտները կարող են նախ վայրը, տարածքը ուսումնասիրել, ապա զբաղվել դրա վերաիմաստավորմամբ, նոր բովանդակություն հաղորդելու գործնական ծրագրի մշակմամբ՝ որոշ իրադարձության, մարդկանց նվիրված ծառատնկում, ցուցահանդես, հանրային միջոցառում, կամ քաղաքային զբոսաշրջային երթուղու մշակում՝ համապատասխան բացատրություններով։ Սրանք այնպիսի գործողություններ են, որ հնարավոր է իրականացնել դպրոցի և աշակերտների ուժերով։ Պատմությունը կարելի է հանրայնացնել՝ նաև օգտագործելով թվային գործիքներ և համացանցային տարածք, որտեղ կարող են ներկայացված և մեկնաբանված լինել հիշողության լանդշաֆտի տարբեր հարթություններ՝ մեզ շրջապատող, առաջին հայացքից ոչ միշտ տեսանելի պատմական շերտեր։ Որևէ իրադարձության հետ կապված ընտանեկան արխիվի թվայնացումն ու հանրայնացումը՝ զուգորդված ընտանեկան պատմություններով, այդ իրադարձությանը առնչվող մամուլի արձագանքով, հետազոտական աշխատանքներից դուրս բերված մեկնաբանություններով, նույնպես մաս է կազմում «հանրային պատմության» և տեսանելի դարձնում «հիշողության լանդշաֆտի» ևս մեկ շերտ։

Ուստի մինչև հանրային պատմության գործնական դաշտ մտնելը, անհրաժեշտ է ուսումնասիրել մեր խնդիրներին առնչվող հիշողության տարածքը՝ այսպես կոչված լանդշաֆտը։ Որպեսզի կարողանանք նյութը կազմակերպված հավաքել և մաս-մաս ուսումնասիրել, նախ փորձենք ուրվագծել, թե ինչպիսի ոլորտներում, տարածքներում, ձևաչափերում, աղբյուրներում կարող ենք որսալ «հիշողության» ներկայությունը, այն հիշողության, որ ձևավորում է հանրային պատմություն.

1. Աշխարհագրական միջավայր
2. Քաղաքային /քաղաքական տարածք
3. Թվային/համացանցային տարածք
4. Ընտանեկան հիշողություն
5. Մեդիադաշտ և գեղարվեստական տարածք

1. Աշխարհագրական միջավայր

Այս շերտը նախնական և մարդուն շրջապատող բնական միջավայրն է, որտեղ, թվում է, թե անտեղի է փնտրել մարդկային հիշողության հետքեր։ Սակայն դա մակերեսային տպավորություն է, քանի որ մեզ շրջապատող բնությունը՝ սկսած լեռներից, գետերից, ընդհուպ մինչև ծառի տեսակներ, մարդը յուրովի է ընկալել և մեկնաբանել, վերագրել նշանակություններ և իմաստներ, որոնք հաճախ դառնում են ազգային ինքնության,

այսօր ապրող մարդու համար կարևոր խորհրդանշաններ։ Ամենաակնհայտ օրինակն է՝ Արարատ լեռը, որը հայաստանյան բնապատկերում կունենա մի մեկնաբանություն. նախ որպես կորսված հայրենիքի խորհրդանիշ, հայության նախահայրենիք, ապա նոր բիբլիական լեռ, լեռնագնացների համար՝ հաղթահարված կամ ձախողված նպատակ, հավատացյալների համար՝ ուխտագնացության վայր, երբեմն էլ այս և մի քանի այլ կետեր կարող են տեղ գտնել մեկ մարդու արժեհամակարգում, արտացոլվել իր կյանքի առանձին դրվագներում։ Թուրքիայի կողմից լեռը ոչ միայն կունենա հակառակ պատկեր, այն նաև իմաստային առումով ունի այլ նշանակություն և կարևորում։ Մեր տարածաշրջանից դուրս այս սարի հետ կապվում է, թերևս, ավելի շատ բիբլիական պատմությունները նն։

Մարդու շրջակա միջավայրը հաճախ է դառնում սրբազան տարածք[5], այսինքն լցվում է իր համար առավել կարևոր և անքննելի իմաստներով ու պատմություններով, որոնք կապված են ոչ միայն առասպելաբանական պատկերացումների և պատմությունների հետ, ինչը նույնպես կազմում է հիշողության լանդշաֆտի մի կարևոր շերտ[6], այլև այսօր կատարվող իրադարձությունների, ծնողների, նախնիների դեռ պահպանվող ոչ շատ վաղ անցյալին առնչվող հիշողություններ։ Սա թույլ է տալիս այդ բնական միջավայրը լցնել մարդկային պատմության տարբեր մեկնաբանություններով և դիտակետերով։ Բնական լանդշաֆտի առանձին հատվածների (լեռների, գետերի, լճերի, աղբյուրների, կիրճերի նն) անունների փոփոխությունը քարտեզի վրա, դրանց շուրջ վեճերը, ցույց են տալիս տարածքի հանդեպ տարբեր խմբերի հավակնությունների, բնական տարածքը յուրացնելու, «սեփականաշնորհելու» օրինակներ։ Բացի անուններից, այդ տարածքներն ու աշխարհագրական կետերը ձեռք են բերում նաև այսօրվա հետ կապվող բազմաթիվ պատմություններ։ Երբեմն այդ տարածքների անտեսումը դառնում է նույնքան կարևոր, որքան դրանց մատնանշումը, քանի որ չիմանալ, չնկատել բնական տարածքը՝ նույնպես դրա հանդեպ վերաբերմունքի նշան է։ Աշակերտների ուշադրությունը կարելի է հրավիրել իրենց բնակավայրի շրջակա միջավայրի վրա՝ որքանո՞վ է այսօր քաղաքային միջավայրում ապրող մարդը զգում, «հիշում» բնական տարածքը։ Ոչ միայն քաղաքներում, այլև գյուղերում ապրող աշակերտների ուշադրությունը կարելի է թիրախավորել մոտակա որևէ գետի կամ լճի վրա, փորձել հասկանալ, թե ինչ անուններով է այն երբևէ նշվել տարբեր քարտեզներում, ինչ

---

[5] Որպես հավելյալ նյութ՝ տե՛ս Լևոն Աբրահամյան, Բնատեսքային սրբավայրեր (Էսկիմոսյան միջնադարյան «Կետուղին», Էյվբըրիի նեոլիթյան և այլ բնատեսք-հուշարձանները), Հուն. 13, 2020: <https://www.youtube.com/watch?v=dvw8550ApY8&t=60s >

[6] Բնական միջավայրի հայկական ժողովրդական բազմաթիվ մեկնաբանություններ, առասպելաբանական պատմություններ կարելի է գտնել ազգագրական և բանահյուսական ժողովածուներում: Լավագույն հավաքածուներից է Ա. Ղանալանյան, Հայկական առածանի, Եր. ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1951:

լեզուներով և ինչ տարբերակներով է հայտնի քարտեզից դուրս՝ կողքին ապրողների տարբեր սերունդների հիշողություններում:

Նախագծային առաջադրանքի օրինակ

Հավաքել Երևանյան լճի/ջրամբարի, Գետառի (կամ որևէ այլ լճի, գետի, սարի) մասին պատմություններ, օգտագործելով տարբեր սկզբնաղբյուրներ, փորձելով վեր հանել դրա տարբեր անվանումները՝ թե՛ պաշտոնական, թե՛ ժողովրդական, հասկանալ դրանց բացատրությունները տեղացիների պատկերացմամբ և դրանք համադրել բառարաններում[7] առկա բացատրությունների հետ: Մոտակայքում ապրող և դրանից հեռու բնակվողներից կարելի է գրանցել պատմություններ, հիշողություններ՝ կապված այդ աշխարհագրական միջավայրի հետ: Օրինակ, պատմություններ, թե ինչպես է տրոլեյբուսը ընկնում Երևանյան լիճը և այնտեղ հայտնվածների մի մասը փրկվում: Նայել, թե որքանով է այս պատմությունն արտացոլվել մամուլում, համացանցում, արդյո՞ք այս պատմությունը հիշատակող որևէ հուշարձան, հուշատախտակ կամ որևէ հիշեցնող նյութական արձագանք կարելի է գտնել տարածքում և ինչ տեղեկություններ կարելի է գտնել համացանցում: Այս գետի, լճի հետ կապված ինչպիսի՞ հիշողության միջոցառում, ծրագիր կառաջարկեին աշակերտները, որտեղ կարտացոլվեր լճի/ջրամբարի ձևավորման պատմությունը (1970-ականներ), դրա նախապատմությունը, ինչ շերտեր (հնագիտական և բնական) են մնում ջրի հատակում, մարդկային հիշողությունը:

Բնական միջավայրը նկարագրելուց կարևոր է հիշել, որ այն կարելի է ներկայացնել երկու տեսանկյունից. մի դեպքում մարդկային պատմությունը կարելի է դիտարկել որպես բնական միջավայրի շարունակություն և հավելյալ շերտ, մյուս կողմից, բնությունն այնքան է փոխկապվում մարդկային պատմության հետ, որ, կարծես, դրանից դուրս գոյություն չունի:

[7] Հարմար սկզբաղբյուրներից է՝ Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան Թ.Խ. Հակոբյան, Ստ.Տ. Մելիք-Բախշյան, Հ.Խ. Բարսեղյան: Երեւանի Համալսարանի Հրատարակչություն, Երեւան, 1986-2001 <http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=6>:

Նախագծային առաջադրանքի օրինակ

Փորձեք գտնել Երևանում այնպիսի թանգարաններ, որտեղ բնությունը ներկայացված է որպես մարդուց անկախ տարածք, և բնության հանրային պատմությունը ներկայացված է այնպես, ինչպես, այն կարող էր ներկայացված լինել անկախ նրանից, թե այդ տարածքում այսօր ինչ պետություններ են: Այդ թանգարանի նմուշները նայելով՝ փորձեք մատնանշել, թե որ դեպքերում է, որ բնական օբյեկտները ստանում են այդ տարածքում բնակվող ժողովուրդների պատմության հետ փոխկապված անուններ: Օրինակ, այնտեղ ներկայացված բույսեր, կենդանիներ, բնական քարեր են, որոնց անվանման մեջ կան առասպելական կերպարների անուններ (Հուդայի ծառ) կամ էթնոնիմներ (ազգերի, քաղաքների անուններ՝ ծիրանի լատինական անվանումը՝ Prunus armeniaca, կատվի տեսակ՝ Վանա կատու, են): Ինչպես է բնական միջավայրը ընկալվում որպես քաղաքական /ազգային /պատմական:

Ինչպիսի մեկնաբանություններ են ստանում բնական գործընթացները, օրինակ, երկրաշարժերը: Սա բնական գործընթաց է, որը մարդկության կողմից ընկալվում է որպես աղետ, իսկ երբեմն նույնիսկ չի նկատվում: Նույն երկրաբանական գործընթացը որոշ հասարակություններում դիտարկվում է որպես արհավիրք, որոշներում՝ պատիժ, որոշներում՝ այն համեմատաբար հանգիստ են ընդունում, որոշներում դրանք անցնում են աննկատ: Հավաքել պատմություններ, թե ինչպես են մարդիկ արձագանքել իրենց կյանքում ապրած երկրաշարժերին, տեսնել, թե ինչպիսի հետևանքներ և հետքեր է այն թողել ձեր ապրած բնակավայրում՝ երկրակեղևի վրա, մարդկանց առօրյայում և հիշողություններում, քաղաքային տարածքում՝ հուշարձաններում, թանգարաններում, են: Հարցադրումների շարքը կարելի է շարունակել:

Բնական միջավայրի «հիշողության լանդշաֆտներից» կարող է լինել նաև տարբեր բույսերի, ծառերի այս կամ այն վայրում հայտնվելու պատմությունը: Օրինակ՝ ինչպես կապույտ եղևնիները խորհրդային շրջանում դարձան կուսակցական վերնախավի

տարածքները նշող ծառատեսակներ և ձեռք բերեցին խորհրդանշական և սոցիալական կարգավիճակի պրեստիժայնության կշիռ։

> *Նախագծային առաջադրանքի օրինակ*
>
> *Պարզել՝ արդյո՞ք ձեր բնակավայրում աճում են կապույտ եղևնիներ, որոնք խորհրդային շրջանում դարձել էին կուսակցական նոմենկլատուրայի վայրը զարդարող ծառատեսակ։ Կրեմլի շուրջ բոլորը դրանց հայտնվելուց հետո այդ ծառատեսակները սկսեցին հայտնվել նաև խորհրդային հանրապետությունների կոմկուսի հանրապետական խորհուրդների շենքի միջավայրում։ Ուսումնասիրել, թե որտեղ և երբ է Հայաստանում հայտնվում այդ ծառատեսակը, որտեղից են դրանք այդտեղ հայտնվել, ովքեր են եղել դրանց տնկողները, ինչ պատմություններ կարելի է պատմել այդ ծառերի մասին և կոնկրետ այդ տարածքում դրանք տնկելու հետ կապված, ինչպես և ովքեր են դրանց խնամել, եղե՞լ է արդյո՞ք որևէ միջոցառում դրանց շուրջը, նն։*

2. Քաղաքային /քաղաքական տարածք

Քաղաքային տարածքն ամենահարուստ հիշողության լանդշաֆտներից է, քանի որ այստեղ են խաչվում տարբեր խմբերի՝ սոցիալական, ազգային, կրոնական ընկալումներ, յուրաքանչյուր խումբ կարող է ստեղծել նույն տարածքի հետ կապված իր պատումը։ Օրինակ, քաղաքի որոշ տարածքներ կարևորվում են ավելի շատ կանանց կամ երեխաների (մանկական զբոսայգիներ) կողմից։ Միևնույն ժամանակ քիչ քաղաքների խորհրդանշական տարածքներում կարող ենք տեսնել կանանց ներկայություն, օրինակ՝ կնոջ անուն կրող փողոց, հայտնի կանանց արձաններ, բայց փոխարենը կանանց անուններ հաճախ հայտնվում են խանութների, տաքսի ծառայությունների և սպասարկման ոլորտի հաստատությունների այլ անվանումներում։ Հասկանալ, թե ինչպես են տարաբաշխվում այդ գենդերային կերպարները ձեզ հետաքրքրող միջավայրում, որ խմբի տեսանկյունից է կազմակերպված տարածքը՝ հանրային պատմության կարևոր հարցադրումներից է։

Քաղաքի հիշողության լանդշաֆտն ընթերցելու նշանակալի թիրախներից են փողոցների անունները, հուշարձաններն ու հուշահամալիրները՝ որպես պատմության հանդեպ պետական մեկնաբանություն, որոշակի գաղափարախոսության և հայեցակարգի դրսևորում։ Սակայն նույնիսկ այս շերտում՝ փողոցի, թաղի անուն,

հուշարձան, բանավոր պատմության և արխիվային հետազոտության շնորհիվ հնարավոր է վեր հանել տեղային, առանձին խմբերի նախաձեռնություններ, որոնք ազդել են անվանակոչման գործընթացի կամ որևէ հուշարձան տեղադրելու վրա։ Ոչ պակաս կարևոր է նաև վերհանել և հետևել այն դեպքերին, նախաձեռնություններին և պատմություններին, որոնք դիմադրում են հանրային տարածքի այս կամ այն պատմական մեկնաբանությանը։ Օրինակ, 2014 թ.-ին Երևանում սկսվեց մի շարժում, որի նպատակն էր կանխել խորհրդային գործիչ Անաստաս Միկոյանի արձանը Երևանում կանգնեցնելու նրա բարեկամների նախաձեռնությունը։ Սակայն այդ ողջ ընթացքը, քննարկումները, բանավեճերն արթնացրեցին հանրային հիշողության խորհրդային շրջանի շերտը, մեջտեղ եկան ինչպես պատմաբանների տարբեր կարծիքներ և գնահատականներ, այնպես էլ առանձին մարդկանց հիշողություններ և ընտանեկան պատմություններ, որոնք երբեմն վերահաստատում, երբեմն հերքում էին Միկոյանի դրական հանրային կերպարը, որ ամրագրվել էր պաշտոնական պատմագրությունում և մեդիա նյութերում։[8] Թերևս հայաստանյան պատմության մեջ առաջին անգամ էր, երբ լրջագույնս և հանրայնորեն սկսեցին քննարկել Հայաստանի խորհրդայնացման հանգամանքները, ստալինյան բռնաճնշումները Հայաստանում, մասսայական սպանությունները, զանգվածային աքսորը, ևն։ Պարզվեց, որ քաղաքում մի, բավականին աննշան, արձան դնելու նախաձեռնություն բավական էր, որպեսզի սեղմվեր խորհրդային բռնաճնշումների մասին հանրային հիշողության ձգանը, և հանրային տարածք նետվեցին խորհրդային անցյալի հանդեպ էականորեն տարբերվող կարծիքներ, գնահատականներ, վերաբերմունք, չխոսված դրվագներ, չքննարկված պատճառա-հետևանքային կապեր, պաշտոնական և հասարակական լուստրացիայի ձևաչափեր և նման գործընթաց անցկացնելու անհրաժեշտության մասին տարակարծիք մոտեցումներ։

Որոշ հուշարձաններ իրենց վրա են կրում քաղաքական փոփոխությունների հետքերը՝ հարմարեցվելով նոր գաղափարախոսությանը։ Ձեր շրջակա հրապարակներում կարող եք գտնել պատվանդաններ, որոնց վրայի նախկին արձանները հանվել են և տեղը զբաղեցրել նորերը։ Շատ փողոցների անուններ զուգահեռ են կիրառվում՝ և՛ հին, և՛ նոր տարբերակները։ Նման դեպքերն ինքնին լավ հուշում են, որ այստեղ կարող են ուշագրավ հետազոտություն անել նրանք, ում հուզում է հանրային պատմության

[8] Шагоян Г.А. Ставить ли памятник Анастасу Микояну? Опыт «социальной люстрации» в Армении // Реабилитация и память. Отношение к жертвам советских политических репрессий в странах бывшего СССР, М.: "Мемориал" - "Звенья", 2016, с. 127-151. ISBN: 978-5-78700-124-2 <https://www.memo.ru/media/uploads/2017/03/02/reabilitacia.pdf>

խնդիրը. ինչո՞ւ, ինչպե՞ս, ե՞րբ, ո՞ւմ նախաձեռնությամբ է տեղի ունեցել այդ փոփոխությունը, արդյո՞ք սա միակ փոփոխությունն է տվյալ փողոցի անվանակոչման պատմության մեջ, ո՞վքեր էին այն մարդիկ և իրադարձությունները՝ ում/ինչի պատվին այն անվանակոչվել է:

Այսպիսով, քաղաքի տարածքի ուսումնասիրությունը որոշ առումով կարելի է նմանեցնել տարածքի «ընթերցման» հետ, որտեղ տառերը փոխարինված են թաղամասերի, փողոցների, խանութների, ծառայությունների անուններով, հուշարձաններով, քաղաքային միջոցառումներով, շենքերի վրա պատկերված գրաֆիտիներով, գովազդով են, այն ամենով, ինչում կա ուղերձ, պատմական որևէ բովանդակություն, տեսանելի կամ տաքուկ հիշողություն: Ողջ մշակութային լանդշաֆտը վերածվում է տեքստի, որտեղ արտացոլվում են տարբեր խմբային ինքնություններ, ընդհանուր հիշողություններ, ազգային մշակույթներ, կրոնական ուղղություններ, տեղային պատմություններ և ճնշված խմբերի հակահիշողություններ, որոնք հակասում են տարածված կարծրատիպային պատկերացումներին: Օրինակ, աշխարհի որոշ քաղաքներում սկսեցին դնել «հակահուշարձաններ», որոնք, կարծես, իրենք իրենց էին հերքում, երբ կոչված էին ոչ թե փառաբանելու նրանց, ում ներկայացնում են, այլ պախարակելու, հիշելու որպես վատ, անընդունելի օրինակ: Շատ խորհրդային հուշարձաններ ինքնաբերաբար վերածվեցին նման գործառույթ ունեցող «հակահուշարձանի»:

Նախագծային առաջադրանքի օրինակ

Գտեք ձեր միջավայրում, քաղաքում, թաղամասում խորհրդային պատմության այնպիսի հետքեր, որոնք կարող են ընկալվել որպես հակահիշողություն՝ հուշարձան, փողոցի անուն, շենքերի վրա մնացած խորհրդային բնաբաններ են: Փորձեք դրանց շուրջ հավաքված պատմությունների միջոցով ցույց տալ, թե ինչու ենք կարող դրանք դիտարկել որպես հակահիշողություն:

Եվ հակառակը՝ փորձեք ձեր միջավայրում գտնել խորհրդային այնպիսի խորհրդանշաններ, որոնք առկա են այս կամ այն վայրում, բայց բացարձակ չեն նկատվում, օրինակ՝ փողոցների լյուկերը, շենքերի զարդարանքում ներառված առանձին խորհրդանշաններ են, բայց որոնք ակնհայտորեն հղում են կատարում խորհրդային շրջանին և չէին կարող նույնացվել այլ ժամանակահատվածի հետ:

Քաղաքի հիշողության լանդշաֆտը կարող է ներառել ժամանակակից «վիզուալ տեքստեր»՝ բացի գրաֆիտիից, նաև հանրային արվեստի նախագծեր, ինստալացիաներ, փերֆորմանսներ, փառատոնային նյութեր, բացօթյա ցուցահանդեսներ: Սրանց կարելի է ավելացնել քաղաքային ծիսական սովորույթները՝ տոները նշելու ձևերը, տարածքների զարդարումը, դրանց միջոցով այն ուղերձների ընթերցումը, որոնք փոխանցվելու են տոնական գործողության շնորհիվ (*փորձեք գրանցել այն բոլոր խորհրդանշանները, որոնցով զարդարվելու է քաղաքը այս պահից մոտակա տոնակատարության ընթացքում*): Այս բոլոր աղբյուրները հետաքրքիր են հատկապես որպես տարածքներ, որտեղ քաղաքացիները կարող են ներառվել և հանդես գալ որպես նախաձեռնող, մասնակից: Այլ կերպ ասած, քաղաքի հանրային պատմության համար հատկապես կարևոր է մտքում ունենալ մասնակցային հատկանիշը, թե որքանով այս կամ այն հիշողության շերտը մասնակցային արձագանք է գտնում:

Քաղաքային լանդշաֆտի հիմքերից է նրա ճարտարապետությունը: Վերջինիս ոճերի փոփոխությունը գաղափարախոսության, քաղաքական շրջադարձերի նշաններից են: Առանձին շենքեր կարող են վերածվել այդ շրջանը խորհրդանշող հուշարձանների: Այսպես, մինչ օրս շենքերի ոճերը մենք տարանջատում ենք այն առաջնորդի անունով, ում օրոք այդ ոճը հաստատվել է կամ շենքը կառուցվել՝ *ստալինկա, խրուշչովկա*… Իսկ ռուսերենով դրանք արտաբերելը նաև ցուցում է, որ գործ ունենք համախորհրդային երևույթի հետ:

Խոսելով քաղաքային լանդշաֆտների մասին՝ պետք է հաշվի առնել, որ 2011 թվականին ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Հանձնարարականներ քաղաքային պատմական լանդշաֆտների վերաբերյալ» քաղաքականության հայտնվելուց հետո, «պատմական քաղաքային լանդշաֆտ» տերմինը ժառանգության ուսումնասիրությունների շրջանակում օգտագործվում է՝ նշելու քաղաքային ժառանգության պահպանման փորձը:[9] «Պատմական քաղաքների» ճակատագիրը սկսեց դիտարկվել ժառանգությունը ապագայի համար պահպանելու տեսանկյունից: Նոր մոտեցումը դարձել է քաղաքներում առանձին պատմական թաղամասերի պահպանման քաղաքականության այլընտրանք: Սակայն ամենակարևոր հանգամանքն այն է, որ «պատմական քաղաքային լանդշաֆտների վրա կենտրոնացած մոտեցումը չի սահմանափակվում ֆիզիկական միջավայրի պահպանմամբ, այլ շեշտում է մարդկային միջավայրի ամբողջության վրա՝ իր բոլոր շոշափելի և ոչ նյութական դրսևորումներով»[10]: Այս մոտեցումն այսօր կիրառվում է աշխարհի տարբեր

[9] Новая жизнь исторических городов: Изложение подхода, ориентированного на исторические городские ландшафты / ЮНЕСКО, 2013.
[10] Նույն տեղում, էջ 5:

տարածաշրջաններում։[11] Այդ շերտերի մի զգալի հատվածը հնարավոր է վեր հանել ոչ նյութական ժառանգությունն արձանագրելու միջոցով, որի համար սովորաբար կիրառվում է բանավոր պատմությունը՝ որպես հետազոտական մեթոդ։ Այս բովանդակությունը լրացնելու համար այն լայնորեն կիրառվում է տարբեր ծրագրերում՝ ներառյալ դպրոցական մասնակցային նախագծերում։

Այստեղ կարևոր է տարանջատել երկու շերտ՝ քաղաքի ինքնությունը (ինչպես է քաղաքը այդ տարածքը բնութագրում, ներկայացնում, որը հատկապես տեսանելի է քաղաքային տոպոնիմիկայում, վարչական կառույցների թաղային միջոցառումներում) և քաղաքացիների ինքնությունը (ինչպես են բնակիչները բնութագրում իրենց պատմությունը, այս բնակավայրում հայտնվելը, ապրելը, տարածքի հետ կապերը, կարևոր վայրերը, ընտանեկան միջոցառումները, կապը այլ վայրերի, քաղաքների հետ են)։ Եթե առաջին շերտը հնարավոր է վեր հանել գրավոր, համացանցային, արխիվային նյութերի հիման վրա, ապա երկրորդի համար անհրաժեշտ է ձեռք բերել դաշտային աշխատանքի որոշ հմտություններ և գիտելիք՝ բանավոր պատմության հարցազրույց, մտային քարտեզ կազմելու իմացություն։

Նախագծային առաջադրանքի օրինակ

ՈՒսումնասիրել որևէ խորհրդային հուշարձանի պատմություն՝ սկսած նրանից, թե երբ, ում նախաձեռնությամբ և ինչպես է կանգնեցվել, ինչպես և երբ է հանվել կամ փոխարինվել մեկ այլ հուշարձանով՝ ամբողջությամբ կամ մասամբ (օգտագործելով հին պատվանդանը)։ Ինչպե՞ս են այդ գործընթացին մասնակցել հարակից տարածքում ապրող բնակիչները, ինչպե՞ս են դրան վերաբերում այսօր, արդյո՞ք ունեն ընտանեկան լուսանկարներ այդ հուշարձանի հետ, ի՞նչ առիթով են։ Ինչպիսի՞ այլ հուշարձաններ կառաջարկեին նորի փոխարեն, եթե ունենային առաջարկ անելու հնարավորություն։ Ինչպե՞ս են վերաբերվում այն գաղափարին, որ այս կամ այն հուշարձանը պետք է հանել, փոխարինել, արդյո՞ք դա պիտի վերաբերի տվյալ շրջանի /գաղափարախոսությանը վերաբերող բոլոր հուշարձաններին, թե որոշման վրա կարող են ազդել տարբեր հանգամանքներ (վայրի կարևորությունը տվյալ քաղաքի ինքնության համար, դրված հուշարձանի գեղագիտական արժեքը, հիշվող անձի պատմական դերը են)։

[11] А. Браточкин, Городское пространство // Все в прошлом, М.: Новое издательство, 2021, с. 26-30.

Փորձեք բացատրել, թե ինչ է «Լենինապատ»[12] անուն ստացած գործընթացը՝ հենվելով գրավոր աղբյուրների, համացանցային նյութերի վրա: Արդյո՞ք դրա դրսևորումը եղել է նաև Հայաստանում: Ինչ հիշողություններ, կարծիքներ է հնարավոր գրանցել այս երևույթի մասին:

«Հիշողության վայրեր» են դառնում ողբերգություններին առնչվող իրադարձությունները: Օրինակ, բնական և մարդածին աղետները, ցեղասպանությունները, պատերազմները կարող են արձանագրվել որպես հիշելու մտային վայր (իրադարձություն, դեպք) թե՛ պետության, թե՛ հասարակության կողմից: Երբեմն այս երկու կողմերի հիշողություններն ուղիղ հակառակ են. պետությունը հաճախ ձգտում է մոռանալ այն, ինչ հասարակ քաղաքացին ջանում է արձանագրել հանրային տարածքում:

Նախագծային առաջադրանքի օրինակ

Հայոց ցեղասպանության (կամ ստալինյան բռնաճնշումների) ոգեկոչման միջոցառումներ, հուշարձաններ խորհրդային շրջանում ոչ միայն չէին խրախուսվում, այլև արգելվում էին: Սակայն դա այնպիսի կարևոր և ցավոտ հարց էր, որ շատերը ջանում և, երբեմն հաջողությամբ, գտնում էին ձևեր հանրային տարածքներում արձանագրելու այդ ողբերգալի պատմական իրադարձությունը: Աշակերտները կարող են հավաքել հուշեր՝ ինչպես արձաններ կանգնեցնելու, միջոցառումներ անցկացնելու, այնպես էլ դրանք արգելելու շուրջ:

3. Հանրային պատմությունը թվային լանդշաֆտում

Թվային պատմությունը թվային հումանիտար գիտությունների մաս է կազմում: «Թվային հումանիտար գիտություններ» ասելով նկատի ունենք համակարգչային

[12] Հմմտ. Л. Абрамян, Борьба с памятниками и памятью в постсоветском пространстве (на примере Армении) // Acta Slavica Iaponica, Tomus XX, 2003, Sapporo, Japan, с. 25-49; Г. Шагоян, «Ленинакан ушел, Гюмри остался» (образы города до и после землетрясения) // Levon Abrahamian, կայքէջ, http://levonabrahamian.com/cntnt/publicatio/articles_b/stati.html, էջ 6-8; Браточкин, Городское пространство // Все в прошлом, М.: Новое издательство, 2021, с. 36-39.

տեխնոլոգիաների օգտագործումը հետազոտական խնդիրները լուծելու, արդյունքներին ծանոթացող լսարանը ընդլայնելու համար: Թվային հումանիտար գիտություններն ազդել են շատ տարբեր ուղղությունների, հումանիտար ոլորտի գրեթե բոլոր մասնագետների վրա, ովքեր ինչ-որ կերպ կապված են անցյալի ուսումնասիրության հետ՝ պրոֆեսիոնալ պատմաբաններից և լրագրողներից մինչև հասարակական գործիչներ, գրողներ: Հարուստ թվային գրադարանները, բովանդակային կայքերը[13], արխիվները՝ ներառյալ անձնական արխիվները[14], սոցիալական ցանցերը նն, ստեղծում են աշխատելու հնարավորություն՝ չհեռանալով թվային տարածքից: Սակայն հանրային պատմությունը թվայնացման միջոցով ներթափանցում է նաև ոչ ակնհայտ տարածքներ: Օրինակ, որոշ համակարգչային խաղեր ներկայացվում են պատմական համատեքստում, և այսպես շրջանառում անտիկ շրջանի, միջնադարի կամ արդի պատերազմների մասին որոշակի կարծրատիպային պատկերացումներ: Այս գործընթացից ետ չի մնում նաև Հայաստանը: Չնայած համակարգչային խաղերի փոքր շուկային՝ մեզանում նույնպես հայտնի են նման խաղեր, որոնցից մեկը, օրինակ, կրում է «Տիգրան» անվանումը՝ հղելով Տիգրան Մեծին, ով այսօր մեզանում ընկալվում է որպես հաղթանակի խորհրդանիշ՝ անկախ նրանից, թե ինչ վախճան ունեցավ իր թագավորությունն իր կյանքի վերջին:

Թվային պատմության ներխուժման մի մեծ դաշտ կապված է QR կոդերով ուղեկցվող երթուղիների մշակումը, երբ բնակավայրի տարբեր կետերում՝ փակ թե բաց, հնարավոր է մուտք գործել թվային տարբեր շտեմարաններ՝ ստանալու այդ վայրի շերտավոր լանդշաֆտի մասին բովանդակային նյութեր՝ տեքստեր, տեսագրություններ, ձայնագրություններ: Եվ լանդշաֆտը այսպես ձեռք է բերում «ձայն» և պատմում իր մասին:

Թվային երթուղիներ կարելի է մշակել google քարտեզների վրա՝ դրանք նույնպես լրացնելով «հիշողության լանդշաֆտներով»՝ ներբեռնելով տարբեր թվային նյութեր:

Այսպիսով, թվային պատմությունը խորապես ազդել է պատմության ընկալման վրա: Եթե նախկինում այն մնում էր նեղ մասնագետների, հիմնականում պատմաբանների շրջանում, այսօր այնտեղ մուտք են գործում ոչ միայն տարբեր մասնագիտության տեր մարդիկ, այլև ցանկացած մեկը, ով կարող է հանրայնացնել պատմության մասին իր պատկերացումները: Հաճախ պրոֆեսիոնալ պատմաբանների գործն է դառնում ուսումնասիրել նման թվային արդյունքներ՝ հասկանալու, թե ինչու և ինչպես է

---

[13] Արևմտյան Հայաստանի պատմության, կենցաղի, հարուստ հիշողության լանդշաֆտի լավ օրինակներից է՝ https://www.houshamadyan.org/arm/home.html կայքը:

[14] Հայաստանում տե՛ս Հայրենադարձության մասին http://www.hayrenadardz.org/hy/ կայքը:

ձևավորվել որևէ պատմական դրվագի շուրջ նման պատկերացում։ Երբեմն մասնագետները այսպիսի տարածքների շնորհիվ հնարավորություն են ստանում համագործակցելու ոչ մասնագետ, բայց պատմությամբ հետաքրքրված լայն հանրության հետ, և արդյունքում ծնվում են համատեղ նախագծեր։

Թանգարանները դիմում են հանրությանը, որպեսզի կիսվեն իրենց կենդանի հիշողություններով, առանձին կայքեր օգտվում են մասնագիտական հանրության կողմից չափազանց մատչելի դարձած մասնագիտական նյութերից։ Նույնիսկ թանգարանների, արխիվների, գրադարանների այցելությունները հաճախ տեղափոխվում են, մասամբ կամ ամբողջությամբ, թվային տարածք։

Նախագծային առաջադրանքի օրինակ

Գտնել Հայաստանի պատմությանն առչնվող երկու թանգարանների կայքեր, ուսումնասիրել դրանք, արձանագրել այն տեղեկությունը, ուղերձները, պատկերացումները, որ հնարավոր է ստանալ այդ կայքէջերից, այնուհետև հաճախել այդ թանգարանը, լսել զբոսավարների բացատրությունները, նրանց հարցեր տալ, և փորձել համադրել իրական տարածքում ստացած տեղեկությունը կայքից արձանագրած տեղեկությունների հետ։ Նշել դրանց համընկնումները, տարբերությունները, մտածել՝ ինչպես է հնարավոր լրացնել որոշ տեղեկություններ թվային տարածքում, դրանցից ո՞րը և ինչպե՞ս է կարելի տեղափոխել թանգարանային տարածք։ Ինչպիսի՞ թվային խաղ կուզենային խաղալ աշակերտները, որտեղ ներառված լինեին այդ թանգարանում ներկայացված հերոսները։ Ինչպիսի՞ հավելյալ նյութ կարող են աշակերտները հավաքել, որպեսզի համալրեն տվյալ թանգարանի թվային շտեմարանը։

Նախագծային առաջադրանքի օրինակ

Աշակերտների ուսումնասիրության տարածք կարող է դառնալ որևէ սոցիալական ցանցի, խմբի ուսումնասիրություն՝ առանձնացնելով խնդիրները որևէ թեմայի շուրջ, փորձել համադրել իրենց հասանելի էջերը՝ ի մի բերելով որևէ խնդրի շուրջ այնտեղ հնչող կարծիքներն ու մեկնաբանությունները: Օրինակ, ուսումնասիրել համավարակի շրջանը, երբ բոլորը ստիպված էին մեկուսանալ և անցնել հեռավար կրթության: Աշակերտները կարող են կիսվել իրենց փորձառությամբ, և դասդասեն այդ ընթացքում սոցիալական ցանցերում իրենց հանդիպած կարծիքները, համադրեն դրանք իրենց տպավորությունների հետ՝ ստեղծելով «համաճարակի բանավոր պատմություն»:

4. Ընտանեկան հիշողություն

Առանձին մարդկանց կենսագրությունները միշտ եղել են պատմաբանների հետաքրքրությունների շրջանակում: Այս կամ այն պատմական գործչին ներկայացնելու համար հիմնական աղբյուրներից մեկն են դառնում ընտանեկան հիշողություններն ու պատմությունները: Դրանք կարող են վերաբերվել ոչ միայն առանձին մարդկանց, այլև առանձին տարածքներին, վայրերին, նույնիսկ քաղաքներին: Երբեմն այս կամ այն քաղաքի մասին ստեղծվում են այնպիսի ընտանեկան պատումներ, որոնք ավելի շատ հիշեցնում են հեքիաթային տարածքներ, բայց ընտանեկան հիշողության մեջ դրանք հենց այդպիսին են: Նման դեպքերի հաճախ հանդիպում ենք, երբ գործ ենք ունենում, օրինակ, «կորսված հայրենիքների» մասին ընտանեկան հիշողությունների հետ: Պարտադիր չէ, որ դա լինի պատերազմների և բռնի տեղահանությունների արդյունքում: Օրինակ, 1988 թ. ավերիչ երկրաշարժից հետո «դրախտային քաղաքի» ձևակերպումները վերաբերում էին այն քաղաքների մասին ընտանեկան պատմություններում, որոնք խիստ տուժել էին երկրաշարժից:

Նման պատումներ, իհարկե, ավելի հաճախ կարող ենք հանդիպել զանգվածային բռնագաղթերի դեպքերում. համեմատաբար վերջերս տեղի ունեցած բռնագաղթերից Շուշի, Հադրութ, Բաքու, Կիրովաբադ և այլ քաղաքների ու լքված հայաբնակ գյուղերի մասին ընտանեկան հիշողություններն ու պատումները ներկայացնում են կարոտախտի տարածքներ, որոնք հաճախ ներկայացվում են իդեալականացված՝ անտեսելով այդ բնակավայրերում ապրելու ընթացքում բազմաթիվ խնդիրները:

Չնայած այսպիսի սուբյեկտիվ պատմություններին՝ ընտանեկան հիշողությունները միևնույն ժամանակ ներկայացնում են հարուստ նյութ այն թեմաների շուրջ, որ շրջանցվում են թե՛ պաշտոնական տեքստերում, թե՛ մեդիայում։ Ավելին, մի շարք ոլորտներ, ինչպիսիք են հուզականությունը, տնտեսական և անձնային հարաբարությունները նն, հնարավոր է իմանալ միայն բանավոր պատմությունների շնորհիվ։ Ուստի, երբ մարդուն խնդրում են պատմել իր մասին, սա առիթ է դառնում գրանցելու ողջ ընտանիքի պատմությունը։ Այն հնարավորինս ամբողջական ամրագրելու համար հարմար գործիքակազմերից է խնդրել հարցազրույցի ընթացքում միասին նայել ընտանեկան ալբոմները։ Սա առիթ է դառնում անդրադառնալու նաև այն կերպարներին, ում մասին մոռացել էին հիշատակել։ Լուսանկարներն այս դեպքում հուշում են տվյալ ընտանիքի համար իրենց կենսագրության կարևոր դրվագները, որոնց շնորհիվ պատմությունը լրացվում է առօրեականության մասին տարբեր հիշողություններով՝ մի ոլորտ, որը, ցավոք, գրեթե ամբողջությամբ բացակայում է պատմության գրքերից, բայց որն ամենալավն է փոխանցում ժամանակի շունչը։

Ընտանեկան պատմությունները տալիս են մի կարևոր չափում, որը հաճախ բացակայում է Մեծ պատմություններում. դա կանանց, երեխաների և բազմաթիվ այլ քիչ լսվող խմբերի տեսանկյունից իրադարձությունները նկարագրելու հնարավորությունն է։ Սովորաբար պատմություններն ավելի շատ լցված են քաղաքական, ռազմական իրադարձություններով, որտեղ գլխավոր հերոսները տղամարդիկ են, սակայն այդ նույն ժամանակաշրջանում տարբեր դժվարությունների, իրադարձությունների, հույզերի միջով են անցել նաև կանայք, երեխաները, տարբեր խոցելի հասարակական խմբեր, և նրանցից յուրաքանչյուրն ունի իր պատմությունը, որը բացահայտում է հարցեր, որոնք ընդունված չէր քննարկել կամ նկարագրել, բայց որոնք այնպիսի խորը հետք են թողել իրենց մանկական հիշողություններում, որ նույնիսկ խորը ծերության տարիքում պատմում են այդ իրադարձությունների մասին։ Ուստի ընտանեկան պատմությունները կարևոր աղբյուր են կանանց, երեխաների պատումների համար հանրային պատմության լանդշաֆտում։

Հաճախ ընտանեկան պատմությունը ներկայացվում է ձեր զրուցակցի հետ կենսագրական հարցազրույց անցկացնելիս, և առանձին մարդու պատմությունը վերածվում է այն հայելուն, որն արտացոլումը ոչ միայն իր ընտանիքը, մոտ միջավայրը, այլև ողջ ժամանակը, որտեղ ընտանիքի անդամներից յուրաքանչյուրի սոցիալական դերի մասնավորեցումը դարձնում է պատմությունը բազմակողմ։[15] Տարբեր

[15] Կենսագրական և ընտանեկան հարցազրույցների ուշագրավ և հաջողված օրինակներ կարող եք գտնել. Խորհրդային կյանքը բանավոր պատմություններում, կազմող՝ Հ. Խառատյան, ՀԱԻ հրատարակչություն,

իրադարձությունների, հաստատությունների, սոցիալական շերտերի, ժամանակաշրջանի պատմությունը կարելի է վեր հանել կենսագրական հարցազրույցների միջոցով, երբ մարդուն հնարավորություն է տրվում կիսվել իր կյանքի փորձով և փորձառությամբ այս կամ այն հարցի շուրջ։

Նախագծային առաջադրանքի օրինակ

Փորձեք կազմել ձեր դպրոցի պատմությունը՝ զրուցելով տարբեր տարիքի ուսուցիչների հետ՝ համեմատելով, թե դպրոցում և շրջակա միջավայրում ինչպիսի պատմական շերտեր, ժամանակաշրջանների հետքեր է կարելի արձանագրել։ Փորձեք դրանց մասին բացատրություն ստանալ ուսուցիչների հետ զրույցներում։ Կարող եք նաև հարցազրույց վերցնել ձեր ծնողներից, ովքեր հաճախել են այդ դպրոցը, և հետո համեմատեք իրենց դպրոցական առօրյան ձեր փորձի հետ. արդյո՞ք կան նմանություններ, որո՞նք են էական տարբերությունները, ինչպե՞ս են ուսուցիչները նկարագրում իրենց փորձառությունը, արդյո՞ք նրանք բաժանում են իրենց աշխատած տարիները կարևոր շրջանների, ինչի՞ հետ են կապում դրանք։ Ինչպե՞ս է փոխվել դպրոցի ֆիզիկական վիճակը՝ շենքը, բակը, հուշարձան/ները (եթե կա/ն), դրա/նց հայտնվելու/հանելու պատմությունը, դպրոցի շենքում առկա պաստառների բովանդակությունը, դրանք կախելու որոշումները ինչպես են կայացվում, դրանց հայտնվելու պատմությունը, հեղինակների հետ հարցազրույցներ են։ Արդյունքում՝ փորձ անել հասկանալ, թե ո՞ր տարիներին են տեղի ունեցել դպրոցի կարևոր նյութական և ոչ նյութական փոփոխությունները, որքանո՞վ էին դրանք փոխկապված, ինչպիսի՞ հանգամանքներ կան, որոնք աշակերտները չեն կարող նշել՝ հենվելով միայն հարցազրույցների վրա։

5. Մեդիադաշտ

Մամուլը, մեդիադաշտն ընդհանրապես հանրային պատմության տեսանկյունից ունի երկու կարևոր գործառույթ. նախ, այն ստեղծում է պատմական բովանդակությամբ

Երևան, 2019, https://epfarmenia.am/hy/document/Soviet-life-in-oral-histories?fbclid=IwAR2vxrrqIP3uIFUCtkW1sw_xdR_TfwfnkBlcaDQj3x3z0YN1VPkUr6MOvs0

բազմաթիվ տեքստեր, հաղորդումներ, շրջանառում դրանք, արդիականացնում այս կամ այն դրույթը, մյուս կողմից՝ արձանագրելով այսօրվա իրադարձությունները, այն վերածվում է պատմության կարևոր սկզբնաղբյուրի։ Հիշողության լանդշաֆտի համար այն իսկապես շատ կարևոր է, քանի որ նմանվում է մի պեղավայրի, որը կարող է պատմության խորքերից դուրս հանել ամենամոռացված հուշարձանը, ապա այն դարձնել զբոսաշրջային վայր։ Մամուլն ունի նման հատկություն, քանի որ կարող է որևէ պատմական նյութ բերել բոլորի ուշադրության կենտրոն։ Հիշատակածս 2014 թ. Միկոյանի հուշարձանի հետ կապված ողջ պատմությունը չէր ունենա որևէ ազդեցություն, եթե այս գործընթացին չմիանար մամուլը և համառորեն չհետևեր «արձանամարտի» ընթացքին։

Սակայն ամբողջատիրական կամ ավտորիտար պետություններում մամուլը հաճախ իրականացնում է ոչ թե իր առաջնային գործառույթը (իրականության մասին տեղեկություն է փոխանցում ընթերցողին), այլ հակառակը, փորձում է իրականությունը թաքցնել կամ առնվազն այնպես աղավաղել, որ միայն վերահաստատվի իշխող գաղափարախոսությունը։ Ուստի մամուլի հաղորդագրությունները, իհարկե, կարող են դառնալ բանավոր պատմության մի մասը, բայց ինքը՝ մամուլը, նույնպես կարող է տեղ գտնել հիշողության լանդշաֆտում, որպեսզի այն «պեղող» ուսումնասիրողը բացահայտի դրա չերևացող ակունքները։ Այսպիսի մի փորձ արել է Փառանձեմ Փարյանը՝ վեր հանելով խորհրդային շրջանում Հայաստանում լույս տեսնող հիմնական պաշտոնաթերթի աշխատանքի չերևացող կողմերը։ Աշխատանքը հիմնականում կառուցված էր թերթում աշխատողների բանավոր հիշողության վրա։ [16]

Նախագծային առաջադրանքի օրինակ

Ընտրեք որևէ կարևոր իրադարձություն Հայաստանի կյանքում և մամուլի միջոցով փորձեք տեսնել՝ ինչպես է այն ներկայացվում տարբեր տարիների թերթերում։ Օրինակը, կարելի է ընտրել համեմատաբար վերջերս տեղի ունեցած իրադարձություններից, որին աշակերտները հասցրել են դառնալ ականատես. պատերազմ, ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանության զոհերի ոգեկոչում, երկրորդ համաշխարհային պատերազմի, Հայաստանի անկախության տոնական միջոցառումներ են։ Համեմատելով

[16] Տե՛ս Փ. Փարյան, Կոմկուսի «Սովետական Հայաստան» պաշտոնաթերթի փոխակերպումները 1989-ին // Heinrich Boll Stiftung, 2019 <https://ge.boell.org/en/2019/06/12/komkowsi-sovetakan-hayastan-pashtonaterti-pokhakerpowmnere-1989-0>

մամուլի տարբեր աղբյուրներում (նույնի տարբեր տարիներին) առկա նյութը՝ նշել տարբերությունները, օրինակ, իրադարձության անվանման մեջ, նկարագրող դրական և բացասական բնութագրերում:

Անցյալի մասին պատկերացումները երեխաներին փոխանցվում են որոշ չափով իրավիճակային՝ հաճախ ոչ հատուկ պայմաններում (օրինակ՝ ծնողների երիտասարդության մասին խոսակցությունների կամ առանձին վայրերի ու առարկաների մասին հիշողությունների միջոցով):[17] Պատմության մի զգալի պաշար երեխաները յուրացնում են գեղարվեստական ֆիլմերից, գրքերից, իսկ ավելի վաղ տարիքում՝ նաև մուլտֆիլմերից: Սրանց ազդեցությունը կարող է լինել շատ տարբեր և երբեմն բավականին վտանգավոր, և կարող են թողնել տևական ազդեցություն՝ պատմական իրադարձությունները գնահատելով խիստ միանշանակ, սև-սպիտակ գնահատականներով: Գեղարվեստական ստեղծագործությունները տարբեր ժամանակաշրջաններում ընթերցողների վրա կարող են թողնել տաբեր ազդեցություններ, առիթ ստեղծել բազմաթիվ զուգահեռների: Ուստի, բանավոր պատմության միջոցով կարելի է վեր հանել գեղարվեստական գրականության, մուլտ/ֆիլմերում կամ կոմիքսներում արտացոլած այս կամ այն պատմական իրադարձության մասին հիշողությունը, հանրային գնահատականը: Այսպիսով, գեղարվեստական ստեղծագործության տարածքը՝ անկախ նրանից, թե որքանով է այն հորինված, հենվում է քիչ թե շատ ճշգրիտ պատմական փաստերի վրա, գեղարվեստական ստեղծագործության շնորհիվ ավելի ազդեցիկ է և ավելի ամուր է մտապահվում:

Նախագծային առաջադրանքի օրինակ

Աշակերտների հետ կազմել այն պատմական ֆիլմերի, գրքերի ցանկը, որ իրենք տեսել են, և փորձել համեմատել, թե այնտեղ արտացոլված իրադարձությունների մասին գրքից/ֆիլմից դուրս ինչ գիտեն, արդյո՞ք դրա մասին արդեն անցել են պատմություն առարկայից և հիշում են այդ դասի բովանդակությունը: Մուլտ/ֆիլմը կամ գիրքը քննարկելուց հետո փորձել կարդալ դրան վերաբերող դասագրքային տեքստը և նշել տարբերություններն ու այն պատմական փաստերի համընկնումները, որ երկու տեղում էլ

[17] А. Кравченко, Литература для детей // Все в прошлом, М.: Новое издательство, 2021, с. 120.

նշված էին՝ և՛ գեղարվեստական ստեղծագործության մեջ, և՛ պատմության դասագրքում:

Ցանկացած հետազոտական նախագծի արդյունք կարելի է ներկայացնել տարբեր ժանրերում՝ ներառյալ գեղարվեստականը, ընդ որում ոչ միայն գրականություն: Աշակերտներին կարող են հրապուրել պատմական կոմիքսները,[18] և, ավելին, իրենք էլ կարող են որևէ հետազոտական ծրագրի արդյունքը ներկայացնել իրենց իսկ կողմից ստեղծած, եթե ոչ բառիս բուն իմաստով՝ կոմիքսներով, ապա՝ գոնե նկարների շարքով:

[18] Հայաստանի պատմության որոշ էջեր կոմիքսի ձևով ներկայացնելու հաջողված փորձերից տե՛ս Տ. Պասկևիչյան, Լ. Գյուլխասյան, Ամառային արձակուրդ. երկու կրակի արանքում, Եր. Ակտուալ արվեստ, 2021: